

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Նրեանի քաղաքագլխի ընտրութիւնը

Այն բոլորը, ինչ որ տեղի ունեցաւ վերջին շաբաթների ընթացքում մեր քաղաքային խորհրդարանում և իրաւասունների շրջանում, քաղաքագլխի ընտրութեան առիթով, կարելի է համարել մի ճիշտ արտացոլումն մեր հասարակութեան ապիկարութեան:

Քաղաքային խորհուրդը—մի ամբողջ հասարակութեան բազմագոյն ընտրեալների կազմը—այսօր մնացել է շուարած, գլուխը կորցրած, առանց կարողանալու գտնել մի ելք, ընտրելու մի ճանապարհ, որով հնարաւոր լինէր դուրս գալ այժմեան նեղ դրութիւնից:

Եւ այդ բոլորը շնորհիւ այն հանգամանքի, որ որոշ կարգի մարդիկ մոռացած հասարակական շահը և ժողովրդի բարիքը, առաջնորդւում են եսական նեղ շահերով:

Այժմեան քաղաքագլխի—Ի. Մէլիք Աղամալեանի—դէմ կազմուած թշնամիների բանակը գործեց. գործեց, մինչև յաղթանակը տարաւ, բայց դա մի յաղթանակ էր, որը աւելի թանգ նստեց նրա հակառակորդներին քան պարտութիւնը, որովհետև վերջին բոլէններում նրա—Մէլիք Աղամալեանի—նեղկայութիւնը աւելի զգայուն եղաւ, բայց արդէն ուշ էր և այս առիթով ծագած տրտունջը ընդհանուր:

Սեպտեմբեր ամսից իր գործունէութեան մէջ մտաւ մայիսին տեղի ունեցած 48 ընտրեալներից բաղկացած խորհրդի նոր կազմը, որի մէջ այժմեան քաղաքագլուխը աւելի քիչ թւով կողմնակիցներ ունէր քան նախկին կազմը:

Սեպտեմբերի 24-ի հերթական նիստում քննուում էր քա-

դաքաղլիսի ոռճիկի խնդիրը, որը անմիջական կապ ունէր ապագայ քաղաքազլիսի անձնաւորութեան հետ: Այս հարցի վրայ իւրաքանչիւրը նայում էր իր նեղ տեսակէտով, ոչ թէ պաշտօնը ի նկատի ունէին, այլ այս կամ այն անձնաւորութիւնը: Այսպէս էին առաջնորդւում շատերը իրաւասուններից: Բացարձակ կերպով համեմատութեան մէջ դնել ներկայ քաղաքազլիսի անձնաւորութիւն այն անձնաւորութիւնների հետ, որոնք համարւում էին թեկնածուներ, վստահութիւն չ'ունէին նոյնիսկ հակառակ կողմի մարդիկ, որոնց համար միանգամայն պարզ էր, որ եթէ ոռճիկը մնայ 5000 բուբլի, այն է նախկին չափը, անպայման կը մնայ նախկին քաղաքազլութիւնը: Այդ ծանր դրութիւնից դուրս գալու գամար միայն մի ելք կար և այդ ելքըն էլ ընտրեցին: Հինգ տարի առաջ ի նկատի ունենալով անձնաւորութեան արժանիքը քաղաքը բիսկ արեց վճարել քաղաքազլիսին 5000 բուբլի ոռճիկ: Եւ նա չը սխալուեց, երեք տարուց յետոյ քաղաքը ունէր տնտեսած երեք տասնեակ հազար բուբլիներ: Իսկ այսօր քաղաքային բիւդժէի աւելի նպաստաւոր պայմաններում յանկարծ հարց էր դառնում 5000 բուբլի ոռճիկի ծանրութիւնը քաղաքի համար: Եւ ձայնից բազմութիւնը արդարացրեց այդ ողորմելի պատճառաբանութիւնը: 22 ձայնով ընդդէմ 18-ի՝ 5,000 բուբլին իջաւ 3,000-ի, հետեաքար Մելիք Աղամայեան այլևս լինել չէր կարող:

Հոկտեմբերի 15-ի հերթական ժողովում նշանակուած էր քաղաքազլիսի ընտրութիւն: Դրուած երկու թեկնածուներն էլ չ'անցան—Գ. Մնացականեան և Բժ. Լ. Տիգրանեան ստացան ձայների փոքրամասնութիւն, թէև մեծ ջանքեր եղան առանձնապէս առաջինի համար: Ռոճիկի փոքր չափ, թեկնածուների չզոյութիւն և այնուամենայնիւ սև քուէների գերակշռութիւն, ահա վարքի այն թւանշանը, որ շահեցին նրանք, որպէս Երևանի քաղաքազլիսի թեկնածուներ...

Սրա հետ միաժամանակ ներկայ քաղաքազլիսի մեծութիւնը սկսեց ակներև դառնալ, տատանուող մարդիկ որոշ դիրք բռնեցին, մի բոպէ արդարութեան ձայնը խօսեց և հոկտեմբերի 29-ի հերթական նիստում, ուր նշանակուած էր քաղաքազլիսի երկրորդ և վերջին ընտրութիւնը, մտաւ 14 ձայնաւորների ստորագրութիւնը կրող մի յայտարարութիւն, որով պահանջում էին ոռճիկի հարցի վերաքննութիւն ունենալ ասելու «եա էլ եմ ցանկանում» պէտք էր ունենալ ընդունակութիւն, որը քչերին է տրուած և այդ քչերին ամուր ձեռքերով պահելու համար պէտք էր վարձատրել, պէտք էր վարձի չափը մե-

ծացնել և ոչ թէ փոքրացնել: Ռոճկի վերաքննութեան հարցը անցաւ 22 ձայնով ընդդէմ 18-ի:

Մի ծանր քար վերացաւ ամենքի խղճի վրայից, որ արժանաւոր մարդը նորից պիտի կանչուէր վարելու քաղաքագլուխի պատասխանատու պաշտօնը, բայց նահանգական վարչութիւնը մերժեց թոյլ տալ քաղաքային խորհրդին նորից վերաքննել ռոճիկի հարցը:

Խնդիրը բարդացաւ, խորհրդի կամաւոր սխալը մնաց սրխալ, երկու թեկնածուներ սեւացան, նոր թեկնածուներ չը կային, իսկ ընտրութիւն պիտի լինէր, մէկին պէտք էր գտնել, ճարուեց այդ մէկը պ. Յ. Մէլիք-Աղամալեան, այժմեան քաղաքագլխի եղբայրը:

Նոյեմբերի 20-ին բացուեց խորհրդի նիստը: Հերթական հարցերից յետոյ, քննուեց նահանգական վարչութեան մերժման հարցը, թէ որ աստիճանի նա իրաւացի է վարուել թոյլ չը տալով վերաքննել քաղաքագլխի ռոճիկ խնդիրը—մի քանի բացատրութիւններէից յետոյ խորհրդի 32 ձայնով ընդդէմ 10-ի որոշեց բողոքել սենատին նահանգական վարչութեան վճռի դէմ վերականգնելով խորհրդի իրաւունքը համաձայն կանոնադրութեան:

Այս որոշումից յետոյ, երբ պիտի անցնէին քաղաքագլուխի ընտրութեան—տեղից կանգնեց քաղաքագլուխ Մէլիք-Աղամալեան և մի ճառով տուեց իր հրաժեշտը: Հինգ տարուայ մէջ վճռուեց ջրանցքի հարցը և վերջնական ձեւակերպումը ստացաւ, քաղաքի դատարկ մեղուկը լցուեց, անգլիական այգին ճահիճներէից մաքրուեց, Աստափեան մեծ փողոցի սալայատալէն, որը 20,000 ր. արժէ շինուեց գանձարանի հաշուով և վերջապէս հայոց գերեզմանատան համար հող յատկացրուեց և ներքա շուրջը պարիսպ շինուեց պահապանի բնակարանով միասին: «Այսքանը, ասաց պ. Մ.-Աղամալեանը, իրաւունք եմ համարում ասել, գլուխ են եկել իմ ջանքերով, որի համար ոչ միայն տարիներով արիւն եմ կորցրել, սիրտ ու թոր մաշել, այլ ամեն անգամ նախատինքներ լսել, բամբասանքի ու չարախօսութեան ենթարկուել և հազար ու մի դժգոհութիւնների և տրտունջների արժանացել: Այս շղթան, որը դուք յանձնեցիք ինձ, նոյնութեամբ վերադարձնում եմ ձեզ և եթէ ես չը կարողացայ այն բոլորը անել ինչ որ պէտք էր—այդ իմ մեղքս չէր»:

Մի փոքր ընդմիջումից յետոյ վերսկսուեց նիստը նախագահութեամբ պ. Կ. Կամսարականի, որը ի զարմանս ամենքի յայտնեց, որ Յ. Մէլիք Աղամալեանը որի ցանկութեան վրայ չէին կասկածում գրաւոր կերպով յայտնել է որ իրան չը

քուէարկեն քաղաքագլխի թեկնածութեան համար: Շուարունմը ընդհանուր էր, եթէ այդ օր ընտրութիւնը կայանար և ընտրելի չը գտնուէր խորհուրդը կորցնելու էր ընտրելու իրաւունքը: Այդ նեղ դրութիւնից դուրս գալու համար, որոշուեց նիստի շարունակութիւնը թողնել յաջորդ օրուայ, թերևս հնար լինէր գտնել մէկին և համաձայնութեան գալ:

Հասաւ յաջորդ օրը ևս, բայց դարձեալ անպատրաստ, առաջարկուեցին երկու անուններ—Ամիրխանեան և Մէլիք Օհանջանեան—երկուսն էլ մեր հասարակութեան շատերի համար բուրրովին անծանօթ անձինք, ուստի որոշ համաձայնութեան գալ դժուար էր, պէտք էր նորից յետաձգել, բայց խորհուրդը չէր զրկուի արդեօք ընտրութեան իրաւունքից: Այս հարցը մի ժամից աւելի վիճաբանութեան և թեր ու դէմ կարծիքների նիւթ դառնալով ընտրութիւնը յետաձգուեց յաջորդ նոյեմբերի 26-ի նիստին և նիստը փակուեց տրտունջների աղմուկով:

Նոյեմբերի 26-ին տեղի ունեցաւ քաղաքագլխի երկրորդ և վերջին ընտրութիւնը: Թեկնածու համարուածները—Փ. Մէլիք-Օհանջանեան, Յ. Մէլիք-Աղամալեան, նախկին քաղաքագլխի եղբայրը, և բժ. Լ. Տիգրանեան, հրաժարուեցին: Երևանի քաղաքագլխի պաշտօնի համար միակ մարդը, որը դրեց իր տուփը, Գ. Մնացականեանն էր, որ առաջին անգամ սեացաւ: Եւ խորհրդի առաջ դրուած էր կամ Գ. Մնացականեան և կամ նշանակովի քաղաքագլուխ: Մի փոքր վիճաբանութիւնից յետոյ, արդեօք մի անգամ սեացած անձը կարող էնորից քուէարկուել, դրուեց այդ միակ տուփը և 24 ձայնով 17-ի դէմ քաղաքագլուխ ընտրուեց Գ. Մնացականեանը:

Ա.-ԴՕ.